



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ԽԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

3 մարտի 2020թ. թիվ 262

ՀՀ ԼՈՌԻ ԽԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 1333 ՀՐԱՄԱՆԻ
ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության գրասենյակի 2020 թվականի մարտի 2-ի թիվ 02/45.7/7857-2020 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 1333 հրամանի թիվ 1 հավելվածի «3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ ֆինանսավարկային, կամ տնտեսագիտության, կամ իրավունքի բնագավառում հինգ տարվա աշխատանքային ստաժ»:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 1333 հրամանի թիվ 2 հավելվածի «3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության, կամ իրավունքի, կամ կադրերի և մասնագիտական կողմնորոշման բնագավառում չորս տարվա աշխատանքային ստաժ»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

 Invalid signature



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

2020թ. մարտի 3
ք. Վանաձոր